ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԼՈՒՍԻՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ

Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի կրտսեր գիտաշխատող։ Երեւանի Պետական Համալսարանի Հայ արուեստի պատմութեան եւ տեսութեան ամբիոնի դասախօս

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ՏԵՍԻԼՔԸ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԱՒԱԳԻ ԱՐՈՒԵՍՏՈՒՄ

14-րդ դարի հայ մանրանկարիչ Աւագի նկարազարդած մատեանների շարքում իր ուրոյն տեղն ունի 1338 թ. Աստուածաշունչը (ՄՄՀ՝ 4429)[1], որն Սուլթանիէյում ընդօրինակել է Մխիթար Անեցին (թ. 55բ, 148բ, 149ա, 184բ), իսկ Աւագ սարկաւագը՝ նկարազարդել (թ. 148բ, 149ա)։ Ինչպէս ձեռագրի սկզբում եւ վերջում, այնպէս էլ արանքներում կան բազմաթիւ թափուած էջեր[2] (պրակահաշիւը եւ բնագրի համեմատութիւնը ցոյց են տալիս, որ բացակայում են նոյնիսկ ամբողջական պրակներ)։ Գրչութեան ժամանակի յիշատակարանի մեծ մասը տպագրուել է[3], իսկ հետագայի յիշատակարանները դեռ անտիպ են[4]։

---

[1] Մատեանի արտաքին յատկանիշների եւ բովանդակութեան համառօտ նկարագրութիւնը տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հատոր Ա., կազմեցին՝ **Եգանեան Օ., Զեյթունեան Ա., Անթաբեան Փ.,** ներածութիւնը՝ Եգանեան Օ., խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, Հայկական ՍՍՌ գիտութիւնների ակադեմիայի հրատարակչութիւն, 1965, էջ 1212, **Աճէմեան Շ.,** Ցուցակ Աստուածաշունչ մատեանի հայերէն ձեռագիրներում, Լիզպոն, Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւն, 1992, էջ 129-131:

[2] Օրինակ՝ 161 եւ 162 թերթերի միջեւ, պէտք է որ թափուած էջ կամ էջեր լինեն, քանի որ Մատթէոսի աւետարանի նախադրութիւնից յետոյ Աւետարանի *«///կոչեա զանուն նորա Յիսուս...»* բնագիրն է (թ. 162ա), իսկ սկիզբը չկայ, հետեւաբար, Մատթէոս աւետարանչի դիմանկարը եւ անուանաթերթը ներկայացնող էջերը եւս կորսուած են: Մարկոսի աւետարանը եւս պակասաւոր է, քանի որ բնագիրը աւարտւում է ԺԶ. 3 գլխի բովանդակութեամբ (թ. 200բ), ապա Ղուկասի աւետարանի անուանաթերթն է (թ. 201ա): Ուրեմն, 200 եւ 201 թերթերի միջեւ կան թափուած թերթեր, որոնցից մէկում էլ ամենայն հաւանականութեամբ պատկերուած է եղել Ղուկաս աւետարանիչը:

[3] **Յովսէփեան Գ.,** Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործակցութեամբ Գլանորի նկարիչ Աւագ դպրի), «Հասկ» հայագիտական տարեգիրք, Ա տարի, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Կիլիկիոյ, 1948, էջ 207, **Խաչիկեան Լ.,** ԺԴ. Դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների ակադեմիայի հրատարակչութիւն, 1950, էջ 307-312, **Գէորգեան Ա.,** Հայ մանրանկարիչներ. Մատենագիտութիւն (IX-XIX դդ.), տպագրութիւն Գահիրէ, 1998, էջ 74:

[4] Հաշուի առնելով յիշատակարանների կարեւոր նշանակութիւնը ձեռագրի ոչ միայն գրչութեան հանգամանքների, այլեւ հետագայ ճակատագրի վերաբերեալ՝ աւելորդ չենք համարում ներկայացնել անտիպ տողերը: Գրչութեան ժամանակի յիշատակարան՝*«Զտկարս մարմնով եւ զմեռեալս հոգով, որ ցաւոտ անձամբ եւ տրտում սրտիւ ծրեցի, աղաչե՛մ յիշման արժանի առնել» (թ. 20բ), «Յետ իմոյ վայելո՛ղք, զանարժան ծառայս, զՄխիթա՛ր, ի բարի մտաց մի՛ մոռանեք, աղաչե՛մ» (թ. 55բ), «Զանիմաստ ծրողս. մի՛ մոռանար, աղաչե՛մ» (թ. 75բ), «Ով վայելողք սուրբ գրոցս, զտառապեալ եւ զմեղաւք մեռեալ ոգիս, զանարհեստ փծուն ծրող գրոյս, ի բարի մտաց մի՛ մոռանեք» (թ. 123բ), «Անհամ* (անմիտ) *բաներ յիմար մտաց»* (թ. 148բ, հիմնական յիշատակարանի խորագիրն է), *«Զտառապեալ եւ զմեղօք մեռեալ ոգիս, աղաչեմ յիշե՛լ*

Այժմ անդրադառնանք մատեանի նկարազարդմանը, որն անաւարտ է[5], ինչի պատճառով էլ մի շարք թերթեր դատարկ են մնացել[6]։ Եղած պատկերներն էլ նկարիչը չի հասցրել գունաւորել. ուրուանկարներն արուած են կարմիր կամ բաց դարչնագոյն թանաքով եւ կարծես թէ արճճէ մատիտով (Գ. Յովսէփեանը գրում է կապար[7], որը նոյն արճիճն է)։ Ամբողջ էջով ներկայացուած մանրանկարների շարքում Եսայի (թ. 22բ, նկար 1) եւ Եզեկիել (թ. 93բ) մարգարէների տեսիլքներն են[8], որոնց հանդիպակաց էջերում համապատասխան բնագրերի նկարազարդ տիտղոսաթերթերն են (թ. 23ա, նկար 2, 94ա)։ Եսայու մարգարէութեան բնագրի տիտղոսաթերթում Լ գլխատառը ձեւաւորուած է Եսայի մարգարէի ամբողջ հասակով կանգնած դիմանկարով՝ գլխին լուսապսակ, աջով օրհնելիս, իսկ ձախում մագաղաթէ բաց գալարը պահելիս։ Գլխատառն աւարտւում է վիշապի գլխով։ Եզեկիելի մարգարէութեան բնագրի տիտղոսաթերթի վերին մասը յարդարուած է կենտրոնում սրածայր բազմակամար կիսախորանով եւ Ե մարդագիր, թռչնագիր ու կենդանագիր գլխատառով։ Երեմիայի մարգարէութեան տիտղոսաթերթը (թ. 124ա) ձեւաւորուած է ճակատազարդով, որի կենտրոնում Երեմիա մարգարէն է՝ լուսապսակը գլխին, ձախում մագաղաթէ գալարը պահելիս, աջը պարզած դէպի երկնքում երեւացող Աստծոյ աջը։

Հին Կտակարանի թեմաներով հայերէն ձեռագիր Աստուածաշունչ մատեանը նկարազարդելու աւանդոյթը սկիզբ է առել 13-րդ դարում[9]։ 14-րդ դարում Աստուածաշունչ մատեանի գեղարուեստական յարդարանքը մի կողմից շարունակում է նախորդ դարաշրջանի աւանդոյթը, միւս կողմից հարստացնում այդ նկարազարդումները նոր մանրամասներով։ Աւագ Ծաղկողի արուեստը զարգացման այս շրջայում ունի իր ուրոյն տեղը։ Շարունակելով նկարազարդման արդէն ձեւաւորուած աւանդոյթը[10]

յայսմ վայրի» (թ.151ա), *«Զտառապեալ եւ զմեղօք մեռեալ ոգիս՝ զՄխիթար, մի՛ մոռանեք»* (թ.184բ), *«Ով դասք լուսերամից եւ պատուական սուրբ ընթերցողք, յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր, զհոգեւոր եղբայրն մեր՝ զՄխիթար ս[ար]կ.[աւագ], եւ զիս զմեղուցեալ գծողս»* (թ. 270ա)։ Հետագայի յիշատակարան՝ *«Ես՝ անարժան տէր Թումայ»* (թ. 20բ), *«Ես գրեցի տէրա[մ]բ, ով [ո]ր կարդայ, մի բերան [ո]ղ[որմ]ի» ասէ ի տէր///* (մէկ բառ, թ. 87բ), *«Ես՝ Սարգիս եպիսկոպոսս»* (թ. 149բ), *«Ես՝ Սարգիս Մոնթս, Թիֆլիս քաղկումն կարդում էի, Սէվայ* (գուցէ Սեւանայ) *առաջնորդ Մեսրոպ վարդապետն եկաւ քաղաքն նվիրակ Աստուածածնին սարկավաքի իշխանութիւնն երետ մինչեւ սուրբ Ակոբայ թաթայխումն սարկավաք կացայ, ետոյ գնաց Սանայհին, օրնշաքաթ հայբեղայ աւրնեաց, հետն տարաւ քաղաքն, քառասունքն քաղկումն կատարեցի։ Ետ գաս ասունք կատարելոյն մինչեւ Մեծ Պասն կա՛ց։ Մեծ Պասի առաջին չորէքշաքաթէ օրն Բարս եպիսկոպոսն առ Աստուած փոխվեցաւ։ Զիս հետն տարաւ Սանահին կարքն կատարեց։ Յետ կարք կատարելոյն գնաց քաղաքն, մինչեւ Համբարձումն ինձ կշտին պահեց։ Համբարձմանէն յետ///»* (շարունակուած, թ.151բ), *«Թվին Ռ.Ճ.Խ.Է.»* (1698 թ., թ.156բ)։ Հետագայի յիշատակարանի ընթերցման գործում մեզ օգնելու համար շնորհակալութիւն ենք յայտնում մեր գործընկեր արուեստաբան, ձեռագրագէտ Դաւիթ Ղազարեանին։

[5] Ըստ Գ. Յովսէփեանի՝ դրա պատճառը կարող էր լինել Աւագի զբաղուածութիւնն Օրբելեաններից ստացած պատուերների պատճառով, տե՛ս **Յովսէփեան Գ.,** նշուած աշխ., էջ 207։

[6] Օրինակ՝ Եւսեբիոսի թուղթը Կարպիանոսին (150բ-151ա), համաբարբառի ութը խորանները (152բ, 153ա, 154բ, 155ա, 156բ, 157ա, 158բ, 159ա) ներկայացնող թերթերը, իսկ 249ա եւ 320ա թերթերում ճակատազարդերի սոսկ կարմիր շրջանակն է արուած։

[7] Նոյն տեղում, էջ 206։

[8] Եզեկիել մարգարէի տեսիլը պատկերող մանրանկարի մասին տե՛ս **Vardanyan E.,** Voir Dieu: L'iconographie Arménienne de la Vision du Trone d'Ezéchiel dans le contexte de l'art de l'Orient chrétien, in "The Armenian Apocalyptic Tradition, A Comparative Perspectives", Essays Presented in Honor of Professor Robert W. Thomson on the Occasion of His Eightieth Birthday, ed. by Bardakjian K., and La Porta S., Leiden: Brill, 2014, pp. 585-7, fig. 6.

[9] **Տէր-Ներսէսեան Ս.,** Երզնկայի 1269 թ. Աստուածաշունչը, Երուս. Թիւ 1925, «Էջմիածին» հանդէս, պաշտօնական ամսագիր հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, ԺԱ.-ԺԲ., Էջմիածին, 1966, էջ 28։

[10] Այստեղ առանձնանում է Երզնկայի 1269 թուականի Աստուածաշունչը, որտեղ նկարազարդումներն աւելի շատ են։ Մանրամասն տե՛ս նոյն տեղում, էջ 28-39։

(սովորաբար Հին Կտակարանի գրքերի բնագրերի սկիզբը կիսախորանով կամ ճակատազարդով եւ լուսանցազարդով ու գլխատառով յարդարելը, դրանց առանձին հեղինակների դիմանկարների պատկերումը եւ այլն)՝ ի յայտ են գալիս այնպիսի մանրամասներ, որոնք բնորոշ են արդէն 14-րդ դարի Աստուածաշունչ մատեաններին, օրինակ՝ արարչագործութեան եւ մեղսագործութեան տեսարանների պատկերումը Ծննդոց Գրքի սկզբում[11]։ Ընդհանրութիւններին զուգահեռ Աւագ Ծաղկողի արուեստում հանդիպում են այնպիսի մանրամասներ, որոնք նախընթաց եւ համաժամանակեայ հայերէն այլ Աստուածաշնչերից մեզ առայժմ յայտնի չեն։ Դրանցից մէկը Եսայի մարգարէի տեսիլքը պատկերող մանրանկարն է, որի ուսումնասիրութեանն էլ նուիրուած է այս աշխատանքը։

Եսայի մարգարէի տեսիլքը պատկերող մանրանկարը յաջորդում է Եսայու մարգարէութեան նախադրութեանը եւ նախորդում է մարգարէութեան «Լուր, երկին, եւ ունկնդիր, երկիր, զի Տէր խօսեցաւ...» *բնագրին։ Յօրինուածքի վերին գօտում պատկերուած է Սուրբ Երրորդութիւնը՝ գահին բազմած, քառամաս շրջանակի մէջ, որից ճառագայթներ են արձակւում (Ես. Դ. 2, 5)։ Շրջանակից դուրս երկու վեցաթեւ սերովբէներ են։ Նրանք ձեռքերում պահում են մէկական քշոց, որոնցից աջին գրուած է.* «Ս[ուր]բ, ս[ուր]բ, ս[ուր]բ՝ Տէր Զօ///[ռութեանց]» *(Ես. Զ. 3)։ Սուրբ Երրորդութեան գահը շրջապատուած է քառակերպով, որի թեւաւոր չորս խորհրդանիշները՝ մարդը եւ առիւծը աջից, իսկ արծիւը եւ եզը ձախից են պատկերուած (Յայտն. Դ. 7, Եզեկ. Ա. 10)։ Խորհրդանիշներից իւրաքանչիւրը պատկերուած է համապատասխան Աւետարանով։ Նման պատկերագրութիւն նկարիչը կիրառել է նաեւ Ահեղ դատաստանում՝ Քրիստոսի Երկրորդ գալստի տեսարանում (ՄՄ 7650, թ. 26բ, ՄՄ 212, թ. 80ա), որտեղ, սակայն, քառակերպի չորս խորհրդանիշներն առանց թեւերի են[12]։*

Յօրինուածքի յաջորդ գօտում Եսայի մարգարէն է՝ կանգնած եւ ոչ թէ ծնկաչոք, ձախ ձեռքին բաց գալարակը պահելիս, իսկ աջը պարզած դէպի իր կողմը թռչող վեցաթեւ սերովբէն։ Վերջինիս առաքելութիւնը Եսայու մեղքերը մաքրագործելն է. «ի ձեռին իւրում ունէր կայծակն[13], զօր առեալ ունելեօք ի սեղանոյ անտի, երեր մերձեցոյց ի բերան իմ, եւ ասէ. ահաւադիկ մերձեցաւ այդ ի շրթունս քո, եւ հանցէ զանօրէնութիւնս քո, եւ զմեղս քո սրբեսցէ ի քէն» *(Ես. Զ. 6-7)։*

Եսայի մարգարէի տեսիլքից մի դրուագ պատկերուած է Տաւուշի մարզում գտնուող Կիրանց վանքի գլխաւոր եկեղեցու թմբուկի հարաւ-արեւմտեան մասի որմնանկարներում (13-րդ դար), որտեղ Եսայու մաքրագործման դրուագն է՝ ներկայացուած սերովբէի եւ նրա առջեւ ծնկաչոք Եսայու պատկերով։ Ն. Թիերին եւ Լ. Դուռնովոն այս եկեղեցու որմնանկարների վերաբերեալ ուշագրաւ ուսումնասիրութիւններ ունեն[14]։

---

[11] Մանրանկարիչ Աւագն այս թեմաները պատկերել է Վեն. Հմ 935 Աստուածաշնչում (մօտ 1341-1355 թուականների միջեւ)։

[12] Այս մանրանկարների մասին մանրամասն տե՛ս **Sargsyan L.,** The Scene of the Last Judgement in the Art of Armenian Miniaturist Avag (14th century), in International Review of Armenian Studies, edited by Kharatyan A., Yerevan, “Gitutyun” publishing house of NAS RA, 2018, n. 2, pp. 139-58.

[13] Կայծակ = ածուխ վառեալ, բացատրութիւնը տե՛ս **Աւետիքեան Գ., Սիրմելեան Խ., Ալգերեան Մ.,** Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, տպարանի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 1045։

[14] **Thierry N.,** A Propos de l’Église de Kiranc’, Rapport préliminaire, Bedi Kartlisa, Revue de Kartvélologie, Études Géorgiennes et Caucasiennes, v. XLI, Paris, 1983, p. 208, sch. 6, fig. 10, **Дурново Л.,** Фрески монастыря Киранц, Материалы из архива Л. А. Дурново, подготовка материалов к изданию и предисловие Аракелян А., редактор Корхмазян Э., Ереван, Айастан, 1990, стр. 9. Ն. Թիերին Կիրանց եկեղեցու որմնանկարները շնորհիւ դրանց վրացերէն արձանագրութիւնների եւ պատկերագրական որոշ ընդհանրութիւնների, դիտարկում է վրացական արուեստի հետ զուգահեռներով, մինչդեռ արուեստաբան Լ. Դուռնովոն քննում է այն իբրեւ հայ-խաղկեդոնական յուշարձան։

Հետաքրքիր մի դրուագ էլ հանդիպում է Նորավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու գաւթի ճակատի Աստուածամօր եւ Մանկան պատկերաքանդակում, որի ստոյգ թուագրութեան շուրջ տարբեր վարկածներ կան, բայց անվիճելի է, որ 14-րդ դարի առաջին կէսի ստեղծագործութիւն է[15]։ Պատկերաքանդակում ձախից Յովհաննէս Մկրտիչն է, իսկ աջից Եսայի մարգարէն՝ աջը պարզած դէպի Աստուածամայրը եւ Մանուկը, ձախով մագաղաթի բացուած գալարը պահելիս։ Վերջինիս պատկերում մի հետաքրքիր մանրամասն կայ, որին հետազօտողներն առանձին ուշադրութիւն չեն դարձրել. Եսայի մարգարէի շուրթին հպուած է սուր եւ երկծայր վերջաւորութեամբ զարդանախշից առանձին շարունակուող մի «գործիք», որը հազիւ թէ զարդ կամ տառ լինի (ինչպէս ՁԱՅՆ *բառի Ձ տառն է Յովհաննէս Մկրտչի դէմքին կից, բայց ոչ հպուած, կամ Ա տառի մասնիկը հպուած Աստուածամօր պարանոցին)։ Չի բացառւում, որ այս «գործիքը» խորհրդանշում է այն ունելին[16], որի օգնութեամբ այրուող ածխի կտորը հպւում է Եսայու շուրթին եւ մաքրագործում նրա խօսքը, որից յետոյ էլ Եսային մարգարէական իր կանխատեսումն է անում։ Վերջինից մի յատուած փորագրուած է մագաղաթագալարի վրայ՝ «ՀԱՅ ԿՈՅՍ. ԵՍԱՅԻ» («Ահայ Կոյսն յղասցի եւ ծնցի որդի...», Ես. է. 14, տե՛ս նկար 3)[17]։ Եսայու եւ Մանուկ Քրիստոսի ֆիգուրների արանքում պատկերուած մանր զարդանախշերի դաշտը հատում է կոր մի զարդամոթիւ, որն ասես առանձնացնի երկու կերպարանքներն իրարից՝ ընդգծելով գուցէ այն խորհուրդը, որ կատարւում է Եսայի մարգարէի հետ։ Այս աշխատանքում մեր խնդիրը չէ այս պատկերաքանդակի սպառիչ ուսումնասիրութիւնը, հետագայում դրա ամբողջական եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւնը գուցէ հաստատի, կամ էլ ժխտի մեր ենթադրութիւնը։*

Դժուար է ասել, արդեօ՞ք Աւագ Ծաղկողի արուեստում այս տեսարանի պատկերումն ազդեցութիւն է հայկական որմնանկարչութիւնից կամ քանդակագործութիւնից։ Պարտադիր չէ ուղիղ կապ տեսնել վերոնշեալ օրինակների հետ (կարող էին լինել այլ օրինակներ, որոնք մեզ չեն հասել կամ դեռ յայտնի չեն), յատկապէս եթէ հաշուի առնենք, որ Աւագի մօտ տեսիլքի աւելի ընդգրկուն պատկերում է։ Չի բացառւում նաեւ փոխազդեցութիւնն արեւելա-քրիստոնէական արուեստի հետ, որտեղ տեսարանը յաճախ է հանդիպում ինչպէս մանրանկարչութեան, այնպէս էլ որմնանկարչութեան մէջ[18]։ Մանրանկարներում քաջ յայտնի հնագոյն օրինակներից է 9-րդ դարի «Կոսմա Հնդկանաւորդի քրիստոնէական տեղագրութիւնը» յունարէն ձեռագրի մանրանկարը (Վատ., Հմր 699, թ. 72բ)[19]։ Որմնանկարչութեան մէջ վաղագոյն օրինակները յանդիպում են Կապադովկիայի եկեղեցիների խորանների որմնանկարներում եւ ըստ Ք. Ժոլի-վէ-Լեւիի՝ դրանք թուով ութն են, որոնցից առաւել հետաքրքիր օրինակը 9-10-րդ

---

[15] Այս պատկերաքանդակի մասին գրականութիւնը բաւական ծաւալուն է, մենք յղում ենք վերջերս հրատարակուած ուսումնասիրութեանը, **Մատթէոսեան Կ.,** Նորավանքի վիմագրերը եւ յիշատակարանները, Երեւան, Մուղնի հրատարակչութիւն, 2017, էջ 57-61:

[16] Նկարիչներն ու քանդակագործներն ունելին տարբեր կերպ են պատկերել, սուր եւ երկծայր վերջաւորութեամբ, ինչպէս բնելիք օրինակում է, հանդիպում է օրինակ Կապադովկիայի Սբ. Երեք Խաչերի եկեղեցու որմնանկարում, գծապատկերը տե՛ս **Садовская Ю.,** Очищение уст пророка Исайи, Альфаи Омега, Ученые записки общества для распространения священного писания в России, No. 2 (24), Москва, 2000, стр. 323.

[17] Արձանագրութեան ընթերցումը տե՛ս **Մատթէոսեան Կ.,** նշուած աշխ., էջ 56, 110-2:

[18] Օրինակ՝ Աթենքի Ազգ. Գրադ. Հմր 7 Սաղմոսարանի, Փարիզի Ազգ. գրադ. Հմր1208 յունարէն Ճառընտիրի կամ Աթոսի լեռան վրայ գտնուող Վատոպեդի վանքի Հմր760 Սաղմոսարանի (թ. 280բ, 11-րդ դար), յունարէն մէկ այլ Ճառընտիրի (Վատ., Հմր 1162, թ. 119բ, 1250 թ., Կ. Պոլիս) համանուն մանրանկարները, տե՛ս **Садовская Ю.,** там же, стр. 322, նաեւ **Bucur B. G.,** Scripture re-envisioned, Christophanic exegesis and the making of a Christian Bible, in The Bible in Ancient Christianity, v. 13, general editor D. J. Bingham, Leiden, Boston: Brill, 2019, pp. 176, 178, 181, figs. 6.1, 6.3, 6.5.

[19] Ձեռագրի ամբողջական լուսապատճէնը տե՛ս հետեւեալ յղմամբ՝ https://digi.vatlib.it/view/MSS_Vat.gr.699.

դդ. թուագրուող Սբ. Երեք Խաչերի եկեղեցու խորանի գմբէթարդի որմնանկարն է[20]*։ Համեմատելի օրինակների հետ Աւագի մանրանկարը մերձենում է թեմայի պատկերագրութեան ընդհանուր կառուցուածքով, քանի որ* «տեսի զՏէր նստեալ յաթոռ բարձրութեան…» *(Ես. Զ. 1) ընթերցուածն այս օրինակներում հանդէս է գալիս միայն գահին բազմած Քրիստոսի կամ Հայր Աստծոյ միջոցով։ Յովհաննէս աւետարանչի* «զԱստուած ոչ ոք ետես երբեք» *(Յովհ. Ա. 18.) ընթերցմանը հակասող Եսայու* «Տեսի զՏէր» *տեսիլքի տողերը (Ես. Զ. 1) Սբ. Գրիգոր Տաթեւացին մեկնում է այսպէս.* «Զեն հակառակ միմեանց, զի ասելն զԱստուած ոչ ոք ետես, այսինքն՝ զէութիւն բնութեանն Աստուծոյ։ Զի ոչ ոք ի յեղականացս տեսանել կարող է, զի տեսութիւն մարգարէիցն բովանդակելի է։ Իսկ Աստուած անբովանդակելի է բնութեամբ։ Բայց մարգարէս ետես, որոնք կար է մարդոյ, այլ կերպարանաւ եւ նմանութեամբ։ Ուստի յայտ է, զի ասէ. տեսի զՏէր նստեալ, զի Աստուծոյ ոչ է տեղի, զի անբովանդակելի է եւ ոչ ասի նստել նմա»[21]։

Մանրանկարիչ Աւագն Եսայու ընթերցուածը պատկերել է մարդու կերպարանքով եւ նմանութեամբ՝ Հայր Աստուած, Սուրբ Հոգի եւ Յիսուս Քրիստոս «Երրորդութիւնը»։ Այս պատկերում Սուրբ Երրորդութեան խորհուրդն աներկբայ է, բաւական է յիշել հայկական մանրանկարներում քառակերպ գահին բազմած Քրիստոսի պատկերը Երկրորդ գալստի տեսարանում, որն ուղեկցւում է Սուրբ Երրորդութեան մասին գրութիւններով[22]*։ Հայր Աստուածը, Սուրբ Հոգին եւ Յիսուս Քրիստոսը կրում են խաչաձեւ լուսապսակ։ Հայր Աստծոյ չափերով անհամեմատ մեծ Աջը օրհնութեան դիրքով է, իսկ ձախ ձեռքը Քրիստոսին հպուելիս է պատկերուած։ Նրանց երկուսի արանքում Սուրբ Հոգին է թեւատարած դիրքով, սակայն ոչ թէ դէպի վար, այլ դէպի վեր։*

Սուրբ Երրորդութեան պատկերի առկայութիւնը Եսայի մարգարէի տեսիլքում կարելի է համարել Աւագ Ծաղկողի արուեստի առանձնայատկութիւններից մէկը, քանի որ նման պատկերում թէ՛ նախընթաց, թէ՛ համաժամանակեայ հայ արուեստի ստեղծագործութիւններում մեզ առայժմ չի հանդիպել[23]*։ Փոխարէնը տեսնում ենք քրիստոնէական համաժամանակեայ այլ արուեստներում, օրինակ՝ բուլղարական 1360 թ. մի Սաղմոսարանում, որտեղ Եսայի եւ Եզեկիել մարգարէների տեսիլքներն են*

---

[20] Յղում ենք հետեւեալ աշխատութեան միջնորդութեամբ՝ **Садовская Ю.,** там же, стр. 323, գծապատկերը տե՛ս նոյնի՝ էջ 326: Կապադովկեան որմնափոր եկեղեցիներից բացի այս թեման հանդիպում է ֆիշ աւելի ուշ թուագրուող Եգիպտոսի ղպտական եկեղեցիների որմնանկարներում, օրինակ՝ Կարմիր ծովի մօտակայքում գտնուող Սբ. Անտոն Մեծի եկեղեցում, տե՛ս նոյնի՝ էջ 327-9:

[21] Մէջբերում ենք հետեւեալ աշխատութիւնից՝ **Ս. Գրիգոր Տաթեւացի** (1346-1409), «Մեկնութիւն մարգարէութեանն Եսայեայ», Հին Կտակարանի գրքերի մեկնութիւններ 15, աշխատասիրութեամբ Յակոբ Քեռսէեանի, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, 2008, էջ 25: Սբ. Գրիգոր Տաթեւացու գործունէութիւնը թէպէտ մի փոքր աւելի ուշ է, քան մեզ հետաքրքրող ժամանակաշրջանը, այդուհանդերձ, նրա մեկնութիւններին անդրադառնում ենք, քանի որ հեղինակը Եսայու մարգարէութիւնը մեկնելիս յենուել է անցեալի հեղինակների մեկնութիւնների վրայ, մասնաւորապէս, Յովհան Որոտնեցու, տե՛ս նոյնի՝ էջ 8, 17:

[22] **Sargsyan L.,** The Scene of the Last Judgement …, p. 141.

[23] Աւելի ուշ հայերէն ձեռագրերում (օրինակ՝ Մաղաքիա Պոլսեցու եւ Մարկոս Պատկերահանի 1686 թ. Աստուածաշնչի համանուն մանրանկարում, ՄՄՀ՝ 349,թ. 357բ), նաեւ հնատիպերում եւ նոյնիսկ կազմերում նման պատկերագրութիւն կարծես թէ չենք տեսնում, օրինակ՝ 1666 թ. Ամստերդամում տպագրուած հայերէն առաջին Աստուածաշնչի, կամ 1691 թ. արծաթէ կազմի (Վենետիկ, Հ՝ 198) եւ Վենետիկի Հ՝ 2061 ձեռագրի կազմի Ա փեղկի համանուն պատկերներում: Վերջիններս, ըստ Ս. Մերիանի՝ կրում են հոլանդական փորագրարուեստի ազդեցութիւնը, տե՛ս **Merian S.,** The Armenian Silversmiths of Kesaria/Kayseri in the Sixteenth and Seventeenth centuries, in Armenian Kesaria/Kayseri and Cappadocia, edited by R. Hovhannisian, Costa Meza, California, Mazda publishers, 2013, pp. 135, 154, 158-9, fig. 5, 10, 11. Ըստ Ն. Ղարիպեանի եւ Ա. Սահակեանի՝ Ոսկան Երեւանցու Աստուածաշնչի փորագրապատկերի համար նախատիպ կարող էր ծառայել ֆրանկֆուրտեան 1564 թ. մի Աստուածաշնչի փայտափորագիր համանուն պատկերը, տե՛ս **Ղարիպեան Ն., Սահակեան Ա.,** Ոսկանեան Աստուածաշնչի պատկերագրութիւնը եւրոպական արուեստի զուգահեռներով, Երեւան, «Անտարես», 2018, էջ 137:

միասին պատկերուած եւ յօրինուածքի կենտրոնում Սուրբ Երրորդութիւնն է՝ գահին բազմած, քառակերպով շրջապատուած։ Տարբերութիւնը մանրանկարիչ Աւագի պատկերած Սուրբ Երրորդութիւնից աղաւնակերպ Սուրբ Հոգու բացակայութիւնն է[24]։ Սովորաբար, Սուրբ Երրորդութեան պատկերներում ընդունուած է պատկերել Հայր Աստծուն, Յիսուս Քրիստոսին, ապա Սուրբ Հոգուն[25], Թերեւս Աւագի օրինակի հետ աւելի մերձենում է Սարգիս Պիծակի 1338 թ. Աստուածաշնչի մանրանկարը, որը Ծննդոց Գրքի սկզբում է զետեղուած (ՄՄ Հմր 2627, թ. 2բ[26]), սակայն ունի պատկերագրական որոշ տարբերութիւններ՝ պատկերուած է Հայր Աստուածը, Յիսուս Քրիստոսը եւ Սուրբ Հոգին։ Կարծում ենք, որ Սուրբ Երրորդութեան այսպիսի պատկերումն Աւագ Ծաղկողի կողմից հետեւութիւն է Յովհաննէսի Աւետարանի այն տողից, որտեղ ասւում է. «զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ...» (ԺԵ. 26)։ Կարելի է ենթադրել, որ պատկերագրական այս շեղումն արուած է Աստուածայայտնութեան գաղափարը շեշտելու համար, որի ցայտուն դրսեւորումը Մկրտութեան տեսարանում է՝ երկնքից երեւացող Աստծոյ Աջի, վար իջնող աղաւնակերպ Սուրբ Հոգու եւ Յիսուս Քրիստոսի պատկերով Յորդանան գետում։ Այստեղ հետաքրքիր իմաստաբանական աղերս կարելի է նկատել ժամանակաշրջանով մեր քննելիք մանրանկարին մօտ եւ կրկին վայոցձորեան երկու այլ քանդակների հետ։ Դրանք են՝ Նորավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու գաւթի մուտքից վեր գտնուող լուսամուտը պսակող քանդակը եւ Սպիտակաւոր Սբ. Աստուածածին եկեղեցու գմբէթի ներսի քանդակը։ Այս երկու քանդակներում կենտրոնական յօրինուածքում Հայր Աստծոյ, Սբ. Հոգու եւ Ադամի (գլխադիր) պատկերներն են։ Ընդ որում, եթէ Նորավանքի քանդակում յօրինուածքը հարուստ է նաեւ այլ մանրամասներով, առաւել բարդ եւ ընդգրկուն խորհուրդ պարունակելով (ձախից Խաչելութեան տեսարանը եւ այլն), ապա Սպիտակաւորի քանդակում այն աւելի մօտ է մեր մանրանկարին, քանի որ յօրինուածքը շրջապատուած է քառակերպով։ Երկու քանդակներում էլ Սուրբ Երրորդութեան երեք անձերն են[27], ինչպէս նշում է Կ. Մատթէոսեանը՝ Քրիստոսի որպէս Նոր Ադամի հանդէս գալու իրողութեամբ[28]։

Եսայու տեսիլքում Սուրբ Երրորդութեան խորհուրդը Բ. Բուքուրը բացատրում է «...եւ ահա արք երեք կային ի վերոյ բան զնա...» ընթերցմամբ (Ծնունդք, ԺԸ. 2), որի միայն հայերէն բնագրով պահպանուած մեկնութիւնում Փիլոն Աղեքսանդրացին կամ Եբրայեցին գրում է. «ի վերայ երից արանցս այսոցիկ՝... որի միջոցին՝ «է»... եւ ի մէջ որոցն է՝ յայտնեաց, կոչեցեալ զնոսա Քերովբէս, որոց զմին նուիրեալ եղեալ լինի արարչական զաւրութեանն, եւ ասի յիրաւի «Աստուած», եւ միւսն իշխանականին եւ արքայականին «Տէր»... տեսանել զտէրունի եւ զսուրբ զաստուածային տեսիլն ըստ այնմ՝ որ մի երեւոյթներ եւ ի նմա իբր երրորդութիւն, եւ երրորդութիւն իբր միութիւն»[29]։ Արեւելեան

---

[24] Մանրանկարի վերատպութիւնը տե՛ս **Bucur B. G.,** op.cit., p. 242, fig. 8.9.:

[25] Օրինակ՝ Սուրբ Երրորդութեան պատկերները 13-14-րդ դդ. Կիլիկեան ձեռագրերի՝ ՄՄՀմր 9422, թ. 21ա, 249ա, ՄՄՀմր 7651, թ. 10ա, Վիեն. Հմր 278, թ. 14ա, Երուս. Հմր 2568, թ. 250ա լուսանցապատկերներում, տե՛ս վերատպութիւնները **Der Nersessian S.,** Miniature painting in the Armenian Kingdom of Cilicia from Twelfth to the Fourteenth Century, jointly prepared for publication with Agemian S. with an Introduction by Weyl Carr A.,V. II, Washington, D. C., Dumbarton Oaks research Library and Collection, 1993, figs. 430-2, 435-6.

[26] Գունաւոր վերատպութիւնը տե՛ս **Matevossian K., Vardanian E.,** La miniature Arménienne, Matenadaran, Album publié à l'occasion du XVIIe Sommet de la Francophonie à Erevan, imprimeur Tigran Mets, Erevan, 2018, p. 150.

[27] **Thierry J.-M.,** Les Arts Arméniens, principaux sites Arméniens par Donabedian P., notices completes par J.-M. et N. Thierry, Paris, edition Mazenod, 1987, p. 204, fig. 101.

[28] **Մատթէոսեան Կ.,** նշուած աշխ., էջ 54, 61, նկար 19, 24:

[29] Մէջբերում ենք հետեւեալ աշխատութիւնից՝ **Տէրեան Ա.,** Նարեկեան մի քանի պատկերներ ու Փիլոնեան նախապատկերները, Բանբեր Մատենադարանի, հ. 25, Երեւան, «Նաիրի», 2018, էջ 20-1, տե՛ս նաեւ **Bucur B.**

եկեղեցու հայրերից Գրիգոր Նազիանզացին Սուրբ Երրորդութեան խորհուրդը տեսնում է սերովբէների «Սուրբ, սուրբ, սուրբ...» բացականչության մէջ՝ իւրաքանչիւրն առանձին վերագրելով Սուրբ Երրորդութեան անձերին[30]։ Եսայի մարգարէի տեսիլքում Սուրբ Երրորդութեան խորհրդանշական պատկերումը Հայր Աստծոյ կերպարով, տեսաբանները լրացնում են երկու սերովբէների առկայութեամբ՝ մեկնելով որպէս «հրեշտակակերպ» պատկերումներ Որդու եւ Սուրբ Հոգու[31]։ Մինչդեռ Աւագ Ծաղկողի մանրանկարում մենք տեսնում ենք Սուրբ Երրորդութեան պատկերումն առանց «այլաբանութիւնների»։

Եսայու տեսիլքի պատկերումն ամբողջանում է մարգարէի մաքրագործումը ներկայացնող մանրամասնով։ Եսայու կերպարը նկարիչը կրկնել է հանդիպակաց էջի գլխատառում. դիմագծերի, վարսերի յարդարանքի, հանդերձանքի նոյնութիւնը թոյլ են տալիս Աւագ Ծաղկողին տեսնել որպէս դիմանկարի արուեստի մէջ հմտացած ստեղծագործողի։ Մարգարէն հայեացքը յառել է դէպի իր կողմը սաւառնող սերովբէն, որը ունելին մօտեցրել է նրա շուրթերին ածխի կտորը հպելու համար։ Հին Կտակարանի այս դրուագը տեսաբանները համարում են Նոր Կտակարանի Հաղորդութեան նախապատկերում՝ յենուելով սուրբ գրային մեկնութիւնների, դրանց շուրջ ստեղծուած ճառերի եւ աղօթքների վրայ։ Նրանք ունելու նշանակութիւնը կապում են Հաղորդութեան գդալի հետ (օգտագործուել է բիւզանդական ծէսում հաղորդութեան ժամանակ[32])՝ ելնելով այն բանից, որ վերջինս անուանուել է նոյն բառով, ինչպէս որ ունելին՝ λαβίς[33]։ Սակայն, ինչպէս գիտենք, հայ եկեղեցու աւանդոյթում Հաղորդութեան ժամանակ գդալի գործածութիւնը բացակայում է։ Աւելի համոզուելու համար, թէ ինչպէս է դրսեւորուել այդ աւանդոյթը պատկերագրութեան մէջ, դիտարկենք Հաղորդութեան մանրանկարներն Աւագի արուեստում։ 1329 թ. (ՄՄ Հմր 7650, թ. 21բ) եւ 1334 թ. (Երուս. Հմր 1941, թ. 6ա) աւետարանների, ապա 1356-8 թթ. Աստուածաշնչի (ՄՄ. Հմր 6230, թ. 442ա) եւ անթուակիր Նոր Կտակարանի (Բրիտ. գրադ. Հմր 5304, 65բ) Հաղորդութեան մանրանկարներում գդալը բացակայում է. Քրիստոսը մի ձեռքում պահում է Հաղորդութեան հացը, միւսում՝ գինու սկիհը։ Այս դէպքում կարծում ենք, որ Եսայու մաքրագործութեան դրուագը կարող է Հաղորդութեան հետ առնչուել մեղքերի թողութեան իմաստով, եւ ոչ թէ դրանում օգտագործուող «գործիքների» զուգահեռով։ Նոյն խորհուրդը տեսնելով երկու դրուագներում՝ կարող ենք ասել, որ ցոյց է տրուած Հին եւ Նոր Կտակարանների կապը, ինչը, ըստ արուեստաբան Լ. Զաքարեանի, հանդիսանում է Աւագ Ծաղկողի արուեստի իւրայատկութիւններից մէկը[34]։

G., op. cit., pp. 165-6.

[30] **Bucur B. G.,** op. cit., p. 171.

[31] Ibid., p. 169.

[32] **Պարոնեան Զ.,** Հայոց պատարագի յատկանշական գծերը՝ համեմատուած քրիստոնէական միւս պատարագների հետ ընդհանրապէս, «Էջմիածին» հանդէս, պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի, Էջմիածին, 1976, հ. Զ., էջ 27:

[33] Ibid., pp. 185-6, **Садовская Ю**., там же, стр. 321-2.

[34] **Զաքարեան Լ.,** Աւագ Ծաղկող, «Էջմիածին» հանդէս, պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյն Ս. Էջմիածնի, Էջմիածին, 1985, հ. է, էջ 51: Հեղինակն այս միտքը յայտնում է ՄՄՀմր 212 Աւետարանում Քրիստոսի ծննդաբանութեան (թ. 16բ-18ա), ապա Աստուածածնի ու Մանուկ Քրիստոսի պատկերների առնչութեամբ (թ. 19ա): Հին ու Նոր Կտակարանների կապը նկարիչը ցոյց է տուել նաեւ Ղուկասի Աւետարանի պատկերումներում, մանրամասն տե՛ս **Սարգսեան Լ.,** «Մարիամի եւ Եղիսաբէթի հանդիպումը» մանրանկարն Աւագ Ծաղկողի արուեստում. պատկերագրութիւնը եւ իմաստաբանութիւնը, «Երիտասարդ հայ արուեստաբանների գիտական ինների նստաշրջանի նիւթեր», Երեւան, ՀՀԳԱԱ «ԳԻՏՈՒԹԻՒՆ» հրատարակչութիւն, 2015, էջ 94, նաեւ **Sargsyan L.,** Illustrated Story of Jesus Christ and John the Baptist According to the Gospel of Luke (Armenian Miniature Art of 14th century), in Revue des Études Sud-Est Européennes, Tome LVI (no. 1-4), Bucharest, editura Academiei Romane, 2018, pp. 50-55.

Այս մատեանը Վեն. Հմր 935 Աստուածաշնչի հետ միասին[35] առանձին արժէք է ներկայացնում մանրանկարիչ Աւագի նկարչական տեխնիկան ուսումնասիրելու համար, ինչպէս նշում է Գ. Յովսէփեանը՝ «տեխնիկայի կողմից ուսանելիք ունինք»[36]։ Այն ցոյց է տալիս ձեռագիրը նկարազարդելու փուլերի յաջորդականութիւնը՝ նախ մատիտով կամ թանաքով գծանկարելը, յետոյ գունաւորելը։ Միեւնոյն ժամանակ այս պատկերները հնարաւորութիւն են ընձեռում բացայայտելու մեր մանրանկարչին որպէս գծանկարի հմուտ վարպետի։ Գիծը նրա արուեստում այնքան սահուն է եւ յստակ, որ այդ ուրուանկարներն իրենց հմայքով չեն զիջում գունանկարներին։ Աւագ Ծաղկողը մանրակրկիտ գծանկարել է իւրաքանչիւր դետալ՝ վարսերը, սերովբէների փետրաւոր թեւերը։ Գծային ռիթմի շնորհիւ պատկերն ունի այն դինամիկան, որն Աւագի ոճի առանձնայատուկ յատկանիշներից է եւ գերազանցուած չէ միջնադարի հայ որեւէ այլ նկարչի կողմից։

Չբացառելով այն, որ գուցէ այլ պատկերներ եւս եղել են այս Աստուածաշնչում, Եսայու եւ Եզեկիելի տեսիլքների առկայութիւնը թոյլ է տալիս տեսնել հետեւեալ օրինաչափութիւնը. Հին Կտակարանեան թեմաներից մանրանկարիչը նախապատուութիւնը տուել է Աստուածայայտնութեան գաղափարը կրող թեմաներին (Նոր Կտակարանեան թեմաներում այս գաղափարը շարունակում է հետաքրքրել նկարչին Ահեղ Դատաստանի մանրանկարների օրինակով ՄՄ Հմր 7650 եւ ՄՄ Հմր 212 աւետարաններում)։ Աստուածայայտնութեան պատկերումն ըստ Եսայու, Եզեկիելի եւ Դանիելի տեսիլքների, ապա ըստ Յայտնութեան գրքի, ինչպէս նկատում են տեսաբանները, վաղ Քրիստոնէական ակունքներ ունի[37]։ Աստուածայայտնութիւնը Եսայու եւ Եզեկիելի տեսիլքների համադրմամբ տեսնում ենք Կապադովկիայի Սբ. Երեք Խաչերի եկեղեցու Ս. Խորանի գմբէթարդում, նաեւ ռոմանական արուեստում, օրինակ՝ Սուրբ Մարիա էսթերի եկեղեցու որմնանկարն Անում (11-րդ դար, Կատալոնիա)[38]։

Քանի որ ՄՄՀմր 4429 Աստուածաշնչից մի շարք էջեր թափուած են, չենք կարող այն դիտարկել որպէս ամբողջական նմուշ։ Այդուհանդերձ այն, ինչ մեզ հասել է մատեանի Հին Կտակարանից, թոյլ է տալիս փաստել, որ Աւագ Ծաղկողը կիրառել է նկարազարդման մի նոր համակարգ, մասնաւորապէս Եսայի մարգարէի տեսիլքն ամբողջ էջով պատկերելը, որի զուգահեռն առայժմ չունենք նախընթաց եւ համաժամանակեայ հայերէն ձեռագիր Աստուածաշնչերում։ Անկախ այն բանից, թէ ինչ նախօրինակ կարող էր օգտագործել մանրանկարիչը, ակնյայտ է, որ նա նորարար եւ աստուածաբանական խորը գիտելիքներով օժտուած ստեղծագործող է եղել։

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Աթենքի Ազգ. Գրադ. – Աթենքի Ազգային գրադարան, Աթենք, Յունաստան

Բրիտ. գրադ. – Բրիտանական գրադարան, Արեւելեան ձեռագրերի բաժին, Լոնտոն, Մեծ Բրիտանիա

Երուս. – Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի Սուրբ Թէոդորոս ձեռագրատուն, Իսրայէլ

ՄՄ – Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ, Երեւան, Հայաստան

---

[35] Այս Աստուածաշնչում մանրանկարիչը չի հասցրել գունաւորել Նոր Կտակարանի մանրանկարները (թ. 539ա, 556ա, 567ա, 585ա)։

[36] Յովսէփեան Գ., նշուած աշխ., էջ 207։

[37] **Садовская Ю.,** там же, стр.327, Vardanyan E., op. cit., pp. 574-5, refs. 5-7.

[38] **Садовская Ю.,** там же, стр. 326, 328.

Այս մատեանը Վեն. Հմր 935 Աստուածաշնչի հետ միասին[35] առանձին արժէք է ներկայացնում մանրանկարիչ Աւագի նկարչական տեխնիկան ուսումնասիրելու համար, ինչպէս նշում է Գ. Յովսէփեանը՝ «տեխնիկայի կողմից ուսանելիք ունինք»[36]։ Այն ցոյց է տալիս ձեռագիրը նկարազարդելու փուլերի յաջորդականութիւնը՝ նախ մատիտով կամ թանաքով գծանկարելը, յետոյ գունաւորելը։ Միեւնոյն ժամանակ այս պատկերները հնարաւորութիւն են ընձեռում բացայայտելու մեր մանրանկարչին որպէս գծանկարի հմուտ վարպետի։ Գիծը նրա արուեստում այնքան սահուն է եւ յստակ, որ այդ ուրուանկարներն իրենց հմայքով չեն զիջում գունանկարներին։ Աւագ Ծաղկողը մանրակրկիտ գծանկարել է իւրաքանչիւր դետալ՝ վարսերը, սերովբէների փետրաւոր թեւերը։ Գծային ռիթմի շնորհիւ պատկերն ունի այն դինամիկան, որն Աւագի ոճի առանձնայատուկ յատկանիշներից է եւ գերազանցուած չէ միջնադարի հայ որեւէ այլ նկարչի կողմից։

Չբացառելով այն, որ գուցէ այլ պատկերներ եւս եղել են այս Աստուածաշնչում, Եսայու եւ Եզեկիելի տեսիլքների առկայութիւնը թոյլ է տալիս տեսնել հետեւեալ օրինաչափութիւնը. Հին Կտակարանեան թեմաներից մանրանկարիչը նախապատուութիւնը տուել է Աստուածայայտնութեան գաղափարը կրող թեմաներին (Նոր Կտակարանեան թեմաներում այս գաղափարը շարունակում է հետաքրքրել նկարչին Ահեղ Դատաստանի մանրանկարների օրինակով ՄՄ Հմր 7650 եւ ՄՄ Հմր 212 աւետարաններում)։ Աստուածայայտնութեան պատկերումն ըստ Եսայու, Եզեկիելի եւ Դանիելի տեսիլքների, ապա ըստ Յայտնութեան գրքի, ինչպէս նկատում են տեսաբանները, վաղ Քրիստոնէական ակունքներ ունի[37]։ Աստուածայայտնութիւնը Եսայու եւ Եզեկիելի տեսիլքների համադրմամբ տեսնում ենք Կապադովկիայի Սբ. Երեք Խաչերի եկեղեցու Ս. Խորանի գմբէթարդում, նաեւ ռոմանական արուեստում, օրինակ՝ Սուրբ Մարիա էսթերի եկեղեցու որմնանկարն Անում (11-րդ դար, Կատալոնիա)[38]։

Քանի որ ՄՄՀմր 4429 Աստուածաշնչից մի շարք էջեր թափուած են, չենք կարող այն դիտարկել որպէս ամբողջական նմուշ։ Այդուհանդերձ այն, ինչ մեզ հասել է մատեանի Հին Կտակարանից, թոյլ է տալիս փաստել, որ Աւագ Ծաղկողը կիրառել է նկարազարդման մի նոր համակարգ, մասնաւորապէս Եսայի մարգարէի տեսիլքն ամբողջ էջով պատկերելը, որի զուգահեռն առայժմ չունենք նախընթաց եւ համաժամանակեայ հայերէն ձեռագիր Աստուածաշնչերում։ Անկախ այն բանից, թէ ինչ նախօրինակ կարող էր օգտագործել մանրանկարիչը, ակնյայտ է, որ նա նորարար եւ աստուածաբանական խորը գիտելիքներով օժտուած ստեղծագործող է եղել։

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Աթենքի Ազգ. Գրադ. – Աթենքի Ազգային գրադարան, Աթենք, Յունաստան

Բրիտ. գրադ. – Բրիտանական գրադարան, Արեւելեան ձեռագրերի բաժին, Լոնտոն, Մեծ Բրիտանիա

Երուս. – Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքի Սուրբ Թէոդորոս ձեռագրատուն, Իսրայէլ

ՄՄ – Մատենադարան, Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ, Երեւան, Հայաստան

---

[35] Այս Աստուածաշնչում մանրանկարիչը չի հասցրել գունաւորել Նոր Կտակարանի մանրանկարները (թ. 539ա, 556ա, 567ա, 585ա)։

[36] Յովսէփեան Գ., նշուած աշխ., էջ 207։

[37] **Садовская Ю.,** там же, стр.327, Vardanyan E., op. cit., pp. 574-5, refs. 5-7.

[38] **Садовская Ю.,** там же, стр. 326, 328.

Վատ. – Վատիկանի Առաքելական գրադարան, յունարէն ձեռագրերի բաժին, Վատիկան

Վեն. – Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարան, Իտալիա

Վիեն. – Վիեննայի Մխիթարեան միաբանութեան մատենադարան, Աւստրիա

Փարիզի Ազգ. Գրադ. – Փարիզի Ազգային գրադարան, Ֆրանսա

Նկար 1. Եսայի մարգարէի տեսիլքը, ՄՄ Հմր 4429, թ. 22բ, 16.5x11.5 սմ.: Տպագրում է Մաշտոցեան Մատենադարանի թոյլտուութեամբ:



Նկար 2. Եսայու մարգարէութեան տիտղոսաթերթը, ՄՄ Հմր 4429, թ. 23ա, 12x10 սմ.: Տպագրում է Մաշտոցեան Մատենադարանի թոյլտուութեամբ:

Նկար 3. Աստուածամայրը Մանուկ Քրիստոսի, Յովհաննէս Մկրտչի եւ Եսայի մարգարէի հետ (Նորավանքի Սբ. Ստեփանոս եկեղեցու գաւթի ճակատ, 14-րդ դարի առաջին կէս): Գծապատկերի հեղինակը վիմագրագէտ Արսէն Յարութիւնեանն է: Պատկերը տրամադրել է պատմական գիտութիւնների դոկտոր Կարեն Մաթէոսեանը: